



ՊԱՏԻՎ ՈՒՆԵՄ



ԿՅԱՆՔՍ՝ ՀԱՅՐԵՆԻՔԻՍ, ՀՈԳԻՍ՝ ԱՍՏՈՒՆ, ՊԱՏԻՎՍ՝ ԻՆՁ

Թիվ 4(19), 31 մայիսի, 2019թ.

ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԿՐԹԱՅԱՄԱԼԻՐԻ ՊԱՇՏՈՆԱԹԵՐԸ

ԲԱՐԻ ԳԱԼՈՒՄՏ ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅՈՒՆ



Նորանշանակ ոստիկանի առաջին քայլը երդման արարողությունն է, որը կյանքում մեկ անգամ և ընդմիշտ է լինում: Երդում, որի հասցեատերերը հայրենիքը, ժողովուրդը և պետական իշխանություններն են: Անկողմնակալ և նվիրյալ ծառայող լինելն առաքելություն է, որին հասնելու տենչը բոլորիս ներսում է: Մայիսի 8-ին ՀՀ ոստիկանության կրթահամալիրում տոնական տրամադրություն էր, քանի որ ուսումնական կենտրոնի 2018-2019թ. ուսումնական տարվա սաների ոստիկանության ծառայողի երդման հանդիսավոր արարողությունն էր, որին ներկա էին ՀՀ ոստիկանության պետի տեղակալ, ոստիկանության գնդապետ Յ. Քոչարյանը, Կրթահամալիրի պետ, ոստիկանության գեներալ-մայոր Մ. Բաբայանը, Կրթահամալիրի աշխատակազմը, ծառայողները և սովորողների հարազատները: Քառասունչորս ծառայող շարային կեցվածքով ու հուզմունքով, թմբուկների զարկերի ներքո երդվեցին անձնվիրաբար ծառայել հայրենիքին, անվերապահորեն կատարել իրենց ծառայողական պարտականությունները, ծառայել հանուն ժողովրդի ապահով, արդար և օրինապահ հասարակական կյանքի ու կենսագործունեության: Նորանշանակ ոստիկանների նախնական մասնագիտական ուսուցումը տեղի է երեք ամիս: Այդ ընթացքում հասցնելու են յուրացնել իրենց հետագա ծառայությանն առնչվող մասնագիտական և տակտիկական գիտելիքները: Նրանք կրտսեր խմբի ուսադիրներով համալրեցին ոստիկանական մեծ ընտանիքի շարքերը՝ հետագայում կրթված և փորձառու սպաներ դառնալու ակնկալիքով: Երդման արարողակարգն անցկացվեց Կրթահամալիրի բարեկարգ շարահրապարակում: ՀՀ պետական օրհներգի ներքո շարային երթով եզրափակվեց երդման հանդիսավոր արարողությունը: Նրանք այլևս համարվելու են օրենքի պահապաններ, հասարակական կարգի պահպանման երաշխավորներ, հանցագործություններ նախականիտող, կանխող և բացահայտողներ, իսկ իրենց առաքելությունը շարունակական և հարատև է լինելու: Ոստիկանները երդվեցին ամուր պահել հայոց պետականությունը, հավատարիմ և խոհեմ ծառա լինել սահմանադրական կարգին, անվերապահորեն ղեկավարվել բացառապես օրենքով՝ չօտարվելով մարդասիրությունից և բարեխղճությունից, պահպանել պետական և ծառայողական գաղտնիքը՝ լինելով արդար, ազնիվ, անկողմնակալ և բարեխիղճ: ՀՀ ոստիկանության պետի տեղակալ, ոստիկանության գնդապետ Յ. Քոչարյանը շնորհավորեց նորանշանակ ծառայողներին՝ պատգամելով հավատարիմ մնալ իրական ոստիկանի կերպարին, անբասիր պահել ոստիկանի կոչումը և դերակատարումը՝ անվտանգ ծառայություն մաղթելով նրանց:

Ոստիկանի մասնագիտությունը բարդ է, պատվաբեր և պատասխանատու: Նոր սերունդը գալիս է հներին փոխարինելու՝ նրանց ստեղծած լավագույնը պահպանելու և ավելի կատարելագործելու ձգտումով: Նրանք մեր վաղվա օրն են, մեր լուսավոր գալիքի կրողները:

Շնորհավոր ձեր մուտքը ՀՀ ոստիկանություն:

Լիանա Խրշոյան

Ծառայության բաժնի կրտսեր տեսուչ, ոստիկանության ավագ սերժանտ

ԿՐԹԱՅԱՄԱԼԻՐԻ ՊԱՏԿԻՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՌԴ ՆԳՆ ԿՐԱՍՆՈՂԱՐԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆՈՒՄ

2019թ. մայիսի 13-16-ը ՌԴ ՆԳՆ Կրասնոդարի համալսարանի հրավերով ՀՀ ոստիկանության կրթահամալիրի պետ, ոստիկանության գեներալ-մայոր Մ. Բաբայանը և կրթահամալիրի պետի տեղակալ, ինքը և տնտեսական բաժնի պետ, ոստիկանության փոխգնդապետ Գ. Առաքելյանը մասնակցեցին համալսարանում կազմակերպված ոստիկանական կադրերի պատրաստմանը նվիրված միջազգային կլոր սեղանի աշխատանքներին:

Բացման խոսքով հանդես եկան Կրասնոդարի ՆԳՆ համալսարանի պետ, ոստիկանության գեներալ-լեյտենանտ Ա. Սիմոնենկոն և ՀՀ ոստիկանության կրթահամալիրի պետ, ոստիկանության գեներալ-մայոր Մ. Բաբայանը: Նրանք ընդգծեցին նման միջոցառումների կարևորությունը ոստիկանական կադրերի պատրաստման նպատակով փորձի փոխանակման համատեքստում:

Միջոցառման ընթացքում մասնակիցները քննարկեցին մասնագիտական կադրերի պատրաստման խնդիրները, ներկայացրին իրենց ուսումնական հաստատություններում



որա առանձնահատկությունները և ուսումնական գործընթացները:

Պատվիրակությանը ներկայացվեցին Կրասնոդարի ՆԳՆ համալսարանի ուսումնական ծրագրերը, դասավանդման համար նախատեսված իրավիճակային լսարանները, հրաձգարաններն ու սպորտային օբյեկտները: Կրթահամալիրի պատվիրակությունը այցելեց նաև համալսարանի Նովորոսիյսկի մասնաճյուղ:

Կրթահամալիրի և ՌԴ ՆԳՆ Կրասնոդարի համալսարանի միջև առաջին անգամ իրականացվեց նաև լա-

վագույն փորձի փոխանակման համար ուսումնական գործընթացի կառավարման համեմատական վերլուծության աշխատանքներ: ՌԴ ՆԳՆ Կրասնոդարի համալսարանը Կրթահամալիրին տրամադրեց ուսումնական գործընթացը կանոնակարգող մի շարք փաստաթղթեր, որոնք կուսումնասիրվեն, և նախատեսվող փոխադարձ այցելության ընթացքում կրթահամալիրի ուսումնական գործընթացի բարելավման նկատառումներով կքննարկվի հիշյալ փաստաթղթերի տեղայնացումը:



ԱՅՍՈՒՋԵՏ ԿՐԹԱՅԱՄԱԼԻՐԻ ԳՈՐԾԸՆԿԵՐՆ Է ՆԱԵՎ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԸ

2019 թվականի ապրիլի 23-ին ՀՀ ոստիկանության կրթահամալիրի և Եվրոպական համալսարանի միջև կնքվեց կրթության ոլորտում համագործակցության վերաբերյալ հուշագիր: Հուշագրի կնքմանը ներկա էին երկու երկրների ղեկավար կազմի ներկայացուցիչները՝ ՀՀ ոստիկանության կրթահամալիրի պետ, ոստիկանության գեներալ-մայոր Մ. Բաբայանի և Եվրոպական համալսարանի ռեկտոր Յ. Բիշարյանի ղեկավարությամբ: Հուշագրի նպատակն է սահմանել կողմերի միջև իրավունքի ոլորտում կրթության իրականացումն ապահովող ֆակուլտետների համագործակցության ուղղությունները, ինչպես նաև կանոնակարգել դրա պայմանները և եղանակները: Այնուհետև մեկնարկեց կողմերի միջև երկխոսությունը, որի ընթացքում կարևորվեց կրթության ոլորտում համագործակցության անհրաժեշտությունը: Նրանք հույս հայտնեցին, որ համագործակ-



ցության նման ձևաչափը կստեղծի անհրաժեշտ պայմաններ՝ իրավագիտության ոլորտում առավել որակյալ մասնագետներ պատրաստելու համար: Ընդգծվեց, որ կողմերն առաջնորդվելու են համագոր-

ծակցությունը զարգացնելու ցանկությամբ:

Մանուկ Մուրադյան
ակադեմիայի պետի տեղակալ,
ի.գ.թ., ղոցենտ,
ոստիկանության գնդապետ

ԴԱՍԸ ՎԱՐՈՒՄ Է ՈՍՏԻԿԱՆԸ



2019 թվականի մայիսի 3-ին ՀՀ ոստիկանության կրթահամալիրի պատվիրակությունը՝ կրթահամալիրի պետ, ոստիկանության գեներալ-մայոր Մ. Բաբայանի գլխավորությամբ, «Դասը վարում է ոստիկանը» ծրագրի շրջանակներում այցելեց Երևանի թիվ 175 միջնակարգ դպրոց: Այցի ընթացքում Մ. Բաբայանը դպրոցականներին պատմեց ոստիկանությունում իր անցած ուղին, ընտրած մասնագիտության առանձնահատկությունները, ինչպես նաև

կարևորեց ոստիկանության դերը պետության կայացման գործում և քաղաքացու կյանքում:

Աշակերտները դասի ընթացքում բազմաթիվ հարցեր ուղղեցին Մ. Բաբայանին և ստացան սպառիչ պատասխաններ: Մ. Բաբայանը ներկայացրեց ոստիկանության կրթահամալիրում սովորելու առավելությունները՝ ակնկալելով, որ ապագայում աշակերտներից ոմանք ցանկություն կունենան ուսումնառությունը շարունակելու և համալրելու ոստիկանության շարքերը:

ՈԳԵՇԵԼՉՈՂ ՏՈՆԱԿԱՆ ԴԱՍ

2019թ. ապրիլի 16-ին ՀՀ ոստիկանության տոնի կապակցությամբ կրթահամալիրի ակադեմիայի երրորդ կուրսի առաջին դասականում դասը վարում էր կրթահամալիրի պետի առաջին տեղակալ, ոստիկանության գնդապետ Տիգրան Եսայանը: Նա նախ՝ շնորհավորեց սովորողներին մասնագիտական տոնի կապակցությամբ, ապա՝ իր մասնագիտական հարուստ փորձը փոխանցեց ոստիկանության ապագա ծառայողներին և հորդորեց, որ ոստիկանության ծառայողի այսպիսի բարդ ու պատասխանատու մասնագիտության մեջ հաջողությունների հասնելու համար պետք է սիրել այն, զինվել կայուն գիտելիքներով, ունենալ մասնագիտական ունակություններ և հմտություններ:

Այնուհետև պարոն Եսայանը



սիրով պատասխանեց սովորողներին հետաքրքրող հարցերին:

Դասի վերջում նրանք շնորհակալություն հայտնեցին պարոն Եսայանին հետաքրքիր,

նպատակային և բովանդակալից դասի համար՝ նշելով, որ նման դասերը շատ ոգեշնչող են, և ցանկալի է, որ շարունակական լինեն:

ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՓՈՒԼԵՐԸ ՀՀ ԵՐՐՈՐԴ ԶԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՅԱՏՎԱԾՈՒՄ

Սկիզբը՝ 28.03.2019թ. թիվ 2 համարում

Հաջորդ փոփոխությունը կատարվեց արդեն ՀՀ կառավարության 2000 թվականի օգոստոսի 16-ի թիվ 485 որոշմամբ, որտեղ Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության բարձրագույն դպրոցը վերանվանվեց Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության ակադեմիա:

Կարևորագույն ձեռքբերում էր ՀՀ կառավարության 2003 թվականի օգոստոսի 28-ի «Ոստիկանության ուսումնական հաստատությունում ուսման մասին կանոնադիրքը հաստատելու մասին» թիվ 1184-Ն որոշման ընդունումը: Կանոնադիրքը բաղկացած էր 2 բաժիններից՝

1-ին բաժնում սահմանվում էին.
- ակադեմիայի դիմորդների ընտրությունը և ընդունելության հիմունքները,

► 3

ԱՆՑՅԱԼԻ ԶԵՐՈՍԱԿԱՆ ԴԱՍԵՐԸ

Արցախյան ազատամարտի փորձությունները հաղթահարած տղաներին պետք է միշտ հիշենք, հայրենիքին կյանքը նվիրաբերած քաջորդիների հիշատակի առաջ պետք է միշտ խնկարկենք. նրանց խիզախության, անձնագոհության, հաղթելու աննկուն կամքի ու վճռականության շնորհիվ ձեռք բերվեց Հաղթանակը, և արցախցին դարձավ իր հայրենիքի լիիրավ տերը:

Այսօր էլ հայորդիները հերոսական էջեր են գրում մեր պատմության մեջ: Հաղթել սովորել են գուցե և հենց Արցախյան ազատամարտի ուսանելի պատմություններով: Կյանքը ցույց տվեց, որ նոր սերունդը լավ է սերտել այդ ամենակարևոր դասը...

Միլիցիայի մայոր Սարմեն Պողոսյանը ծնվել է 1950 թվականին Արցախի Մարտունաշեն գյուղում: Երևանի միլիցիայի դպրոցը գերազանցությամբ ավարտելուց հետո սովորել է ԽՍՀՄ Ներքին գործերի նախարարության Դոմի Ռոստովի ակադեմիայում:

Դոմի Ռոստովում էլ գտնում է կյանքի ընկերուհուն՝ Արեգմազին:

«Ես երջանիկ եմ, նաև հպարտ կին եմ, որովհետև Սարմենի կինը չէր կարող հպարտ չլինել: Ես հիմա էլ եմ հպարտ. Սարմենը միշտ ինձ հետ է: Այգու՜մ, որ գործ են անում, ինձ թվում է՝ ինքը հետևում է, տեսնում... Նույնիսկ երբեմն բարձրաձայն խոսում են հետը...»:

Մինչ Արցախյան պատերազմը Սարմենը մեկ այլ՝ հանցավորության դեմ կռվի մեջ էր: «Ուշ էր գալիս, մեկ էլ տեսար, կեսգիշերին գնում էր ինչ-որ ահագնազով: Երբեք չեմ տրտմեցել: Ես քրեական հետախույզի աշխատանքը միշտ սիրել եմ, «Քրեական հետախույզության տեսուչը» ֆիլմն էլ սիրածս ֆիլմերից էր: Հիշում եմ, Սարմենը որ ավարտեց, քրեական հետախույզությունում գործի նշանակեցին: Երկուսս շատ էինք ուրախացել: Նա գերազանցությամբ էր ավարտել: Ուղարկում էին Մոսկվա՝ ուսումը շարունակելու, սակայն հրաժարվեց: Տանը յոթ երեխա էին. պետք է ծնողներին օգնեիր:

Սկզբում աշխատում էր Օրջոնիկիձեի ներքին գործերի բաժնում, հետո տեղափոխվեց Սպանդարյանի բաժին: Քրեական հետախույզությունում աշխատելը հեշտ չէր: Երբ գիշերվա ժամը 10-ին էր գալիս տուն, զարմանում էի՝ եսքան շուտ եկա՞ր: Գիտեիք, սովոր էինք, որ ինքը ժամը 12-ից շուտ չպիտի գա»,- ասում է Արեգմազը:

Հետո սկսվեցին անհանգիստ, տագնապալի օրեր. երկրի սահմաններն ու ազատագրական պայքարի ելած Արցախը դարձան ոտնձգությունների թիրախ: Մարտունաշենը, Գետաշենը, Շահումյանը ամենախոցելի էին, ու Սարմեն Պողոսյանի միտքը սկեռվեց դեպի ծննդավայր, դեպի Արցախ...

Ոստիկանության կրթահամալիրի բակում Արցախյան ազատամարտում զոհված ոստիկանների հիշատակը հավերժացնող հուշակոթող կա, որի վրա փորագրված է նաև Սարմեն Պողոսյանի անունը:

Կրթահամալիրի պետի առաջին տեղակալ Տիգրան Եսայանը Սարմեն Պողոսյանի հետ աշխատել է Սպանդարյանի ներքին գործերի բաժնում: «Նույն աշխատասեյակում էինք մտնում, ու ես նրանից շատ բան



էի սովորում: Սարմենը յուրահատուկ, խարիզմատիկ կերպար էր: Հայրենասեր էր: Երկի հայրենասիրությունը նրա մեջ առաջին տեղում էր: Ջարմանում էր, ջղայնանում, թե ինչու լավ չգիտենք հայրոց պատմությունը, մեր մեծերի մասին... Ցավագին էր տանում, երբ ինչ-որ բանից տեղյակ չէի: Զեր գլանում, ոգևորված պատմում էր... Սեղանին միշտ օրվա թերթերն էին. շատ էր հետաքրքրվում Արցախում կատարվող իրադարձություններով, հատկապես՝ Մարտունաշենի, Գետաշենի ժողովրդի կյանքով...

Լինում էր՝ գալիս էի գործի, աշխատասեյակում տեղ չկար մտնել: Համապարկացիներն էին: Ասում էր՝ կարևոր գործով ենք զբաղված»,- պատմում է Տիգրան Եսայանը:

Իսկ կարևոր գործն Արցախյան ազատամարտում հաղթելն էր, հայրենի Մարտունաշենը, Գետաշենը, Շահումյանն ազատագրելն էր...

«Ջարմանալի ռոմանտիկ էր. մեկ էլ տեսար այն ժամանակների համար այնպիսի անիրականաճալի ծրագրեր կմտածեիր: Ասում էր. «Մեր հողը պիտի ազատագրենք՝ ինչ գնով էլ լինի»: Ինքը հիվանդ էր դրանով, ապրում էր այդ գաղափարներով: Անմահացողը նվիրվել գիտեիր»,- ասում է Տիգրան Եսայանը:

Վերջին անգամ գնալիս նայեց տանը և կնոջն ասաց. «Երկրորդ հարկն այդպես էլ չսարքեցի, ոչինչ... Երեխեքիս լավ կնայես, հայուհի կդաստիարակես»:

Հետո գալիս է բոթը Սարմենը չկա...

Զոհվել էր Երբեք գյուղից Գետաշեն գնալու ժամապարհին: 1990 թվականի սեպտեմբերի 16-ն էր...

... Գարուն է, Սարմեն Պողոսյանի տնկած ծառերը, որ հիմնականում հայրենի Մարտունաշենից էր բերել, նորից ծաղկել են: Ու նորից երկնքում փառավորվել է Սարմենի հոգին...

Միլիցիայի մայոր Սարմեն Պողոսյանի տանն ամեն ինչ տիրոջն է հիշեցնում՝ համագեցեցող, այգին, կիսատ թողած կառույց...

Բոլորը նրա հիշողությունն են պահում, հիշողությունը մի մարդու մասին, որ որդին էր նախ Հայրենիքի...

Հասմիկ Պողոսյան



ՊԱՏԵՐԱԶՄԻ ՈՒ ՕՐԵՆԵՔԻ ԶԻՆՎՈՐԸ

Երկրորդ աշխարհամարտն էր. դարասկզբի կոտորածներից, 30-ականների բռնաճնշումներից դեռևս ուշքի չեկած հայ ժողովրդի հարյուրիսկանաբարձր զավակներ գնացին նոր կռվի: Շինարար ու հողագործ, զենքը գործիք դարձրած, անծայրածիր, անծանոթ ափերում կռիվ տալով, զոհվելով ու ապրելով, պարտվելով ու հաղթելով, Խորհրդային Միության բազմազգ ժողովրդի հետ կերտեցին հաղթանակը, որ մարդկությունը փրկվի ֆաշիզմից:

Պատերազմից վերադարձածներից ոմանք զինվորագրվեցին օրինականության պահպանման, հանցավորության դեմ պայքարի գործին: Մեղրաձորցի Ցուլակ Հակոբյանը նրանցից մեկն էր:

Տասներորդ դասարան էր փո-

խադրվել, երբ սկսվեց պատերազմը: Ավագ եղբայրները՝ Կամսարն ու Քալանթարը, մեկնեցին ռազմաճակատ: Երկուսն էլ չվերադարձան: Ինքը զորակոչվեց 1942-ի հոկտեմբերին: Հայկական Թամանյան դիվիզիայի 526-րդ գնդի զինվորի ուղին սկսվեց Հյուսիսսային Կովկասի ազատագրական մարտերից: «Ամենահեղեղ Կերչում էր»,- հիշում է ու... հուզվում...

«Պատերազմը սարսափելի բան է»,- ասում է ու ամեն դրվագ հիշելիս խեղդում արցունքները: «Հիշում եմ, ցուրտ ծնե էր, մեր գունդը մի քանի օր Բելառուսիայի անտառներում կռիվ էր տալիս: Երբ գիշերը մարտը դադարում էր, ծյունը հավաքում, բարձր սարքում, որ մի քիչ քնենք: Հետո՝ երբ արթնանում էինք, չինե-

լը չէինք կարողանում պոկել «բարձից»...»:

Թերթում է մասունք դարձած լուսանկարների ալբոմը. մարտական ընկերներն են, գործընկերները... Իսկ այս մեկը մայրն է: «Շատ սիրուն կին էր, մաքրասեր, բարի»,- ասում է ու մանկան պես հուզվում:

Փառապանծ Թամանյան դիվիզիայի կազմում հասավ մինչև Գերմանիա:

«Ես Բեռլին չմտա, մեզ ահագին հետ պահեցին, որ պահենք թիկունքը, որպեսզի գերմանացիները հանկարծ թիկունքից անակնկալի չբերեն»,- պատմում է Ցուլակ Հակոբյանը:

Պատերազմի ավարտից հետո դիվիզիան տեղակայվեց Էջմիածնում:

«Մի օր Հովհաննես Բաղդասյանը եկավ մեզ մոտ:

► 3

ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԿՐԹԱՅԱՄԱԼԻՐԻ ՊԱՏԿԻՐԱԿՈՒԹՅԱՆ ԱՅՑԸ ԴՈՎՅԱՆՆԵՄ ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ՏՈՒՆ-ԹԱՆԳԱՐԱՆ



2019 թվականի մայիսի 2-ին ոստիկանության կրթահամալիրի մի խումբ ծառայողներ և սովորողներ այցելեցին Ամենայն հայոց մեծ բանաստեղծ Յովհաննես Թումանյանի տուն-թանգարան: Տարին թումանյանական է, և մեծն պոետի ծննդյան 150-ամյա տարեդարձի կապակցությամբ կրթահամալիրի պատվիրակությունը հաճելի անակնկալ մատուցեց թանգարանի աշխատակիցներին ու այցելուներին: Կրթահամալիրի լեզուների ամբիոնի նախածեռնությամբ մասնակիցները 5 լեզուներով՝ հայերենով, ռուսերենով, անգլերենով, ֆրանսերենով և պարսկերենով, արտասանեցին և երգեցին Թումանյանի ստեղծագործություններից:

Լեզուների ամբիոնի պետ Ա. Հայրապետյանը նշեց, որ Թումանյանը համամարդկային գրող է, և որա վառ ապացույցն աշխարհի տարբեր լեզուներով թարգմանված նրա ստեղծագործություններն են:

Նա ավելացրեց նաև, որ պոետը շատ է կարևորել թարգմանության դերը համաշխարհային գրականության մեջ և անձամբ բազմաթիվ ստեղծագործությունների թարգմանության հեղինակ է:

Հայոց լեզու և գրականություն առարկայի դասախոս Ռ. Մուսայելյանն իր խոսքում ասաց, որ մեր ազգային նկարագրի և մտածողության անգուցական արտահայտիչն ու բոլոր ժամանակների մեծանուն բանաստեղծը մեր գեների մեջ է, այդ իսկ պատճառով դյուրին է հաղորդակցվել նրա հետ: Ապագա ոստիկանները ներշնչված են Թումանյանի հայաշունչ ստեղծագործություններով, հետևաբար, սիրով ու նվիրումով են սովորում ու արտասանում Թումանյան:

Թանգարանի աշխատակիցները հիացմունքով արտահայտվեցին ոստիկանների կազմակերպած հնգալեզու գրական-երաժշտական կոմպոզիցիայի վերաբերյալ:

ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԿՐԹԱՅԱՄԱԼԻՐԻ ԶԱՐԳԱՅՄԱՆ ՓՈՒԼԵՐԸ ՀՀ ԵՐՐՈՐԴ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՅԱՏՎԱԾՈՒՄ

2 - ակադեմիայում ուսումնական գործընթացի կազմակերպումը,
- ակադեմիայի շրջանավարտների ամփոփիչ պետական ատեստավորումը,
- ակադեմիայի գիտամանկավարժական և գիտական մասնագետների պատրաստումը,
- Հայաստանի Հանրապետության (այլ պետությունների) այլ պետական բուհերից ուսանողների տեղափոխումն ակադեմիա,
- ակադեմիայից սովորողների ազատումը, ուսումնառության դադարեցումը, վերականգնումը և նույն կուրսում թողնելը,
- ակադեմիայի պրոֆեսորադասախոսական անձնակազմի աշխատանքների նորմավորումը և կազմակերպումը:
2-րդ բաժնում սահմանվում էին.
- ոստիկանության ուսումնական կենտրոնում ուսումնական դասակների կազմավորումը,
- կենտրոնում ուսումնական գործընթացի կազմակերպումը,
- կենտրոնի դասախոսական անձնակազմի աշխատանքների նորմավորումը և կազմակերպումը,
- կենտրոնից թեկնածուների և ծառայողների ազատումն ու ուսուցմանն առնչվող այլ դրույթներ:

Կանոնագրքով նախատեսված էր նաև ուսումնական գործընթացները կարգավորող տարբեր տեղեկանքների և նորմերի նմուշներ:
Հետագայում 2005, 2008, 2010, 2011 թվականներին, կանոնագրքում կատարվեցին բազմաթիվ փոփոխություններ և լրացումներ, որոնք վերաբերում էին սովորողների ընդունելության առանձնահատկություններին, թույլատրում էին իրականացնել ձեռնարկատիրական գործունեության տարբեր տեսակներ, հստակեցվում է գիտական խորհրդի գործունեությունը և այլն, իսկ «Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի նոյեմբերի 9-ի թիվ 1791-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի օգոստոսի 28-ի թիվ 1184-Ն որոշման ուժը կորցրած ճանաչելու մասին» որոշումը ՀՀ կառավարության 2014 թվականի սեպտեմբերի 18-ի թիվ 997-Ն որոշմամբ ուժը կորցրած ճանաչվեց:

Շարունակելի...

Արտակ Մնացականյան
գիտական աշխատանքների բաժնի պետ,
ի.գ.թ., ոստիկանության մայոր

«ԲՈՒՅԵՐԻ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ, ԳՈՐԾԸՆԹԱՅՆ ՈՒ ԶԱՓԱՆԻՇՆԵՐԸ» ԹԵՄԱՅՈՎ ՀԱՆԴԻՊՈՒՄ ԿՐԹԱՅԱՄԱԼԻՐԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ՀԵՏ

ՀՀ ոստիկանության կրթահամալիրի պետի կողմից հաստատված ժամանակացույցով նախատեսված հանդիպումների շրջանակում սույն թվականի մայիսի 2-ին ՀՀ ոստիկանության կրթահամալիրի աշխատակիցների և սովորողների հետ տեղի ունեցավ ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 30-ի N 959-Ն որոշմամբ հաստատված ենթակառուցվածքային հավատարմագրման 1-ին (առաքելությունը և նպատակները) և 2-րդ (կառավարումն ու վարչարարությունը) չափանիշների ներկայացումը՝ «Բուհերի հավատարմագրման նշանակությունը, գործընթացն ու չափանիշները» թեմայով: Բանախոսների դերում հանդես եկան ՀՀ ոստիկանության կրթահամա-

լիրի ակադեմիայի պետի ուսումնական աշխատանքների գծով տեղակալ, ոստիկանության գնդապետ, իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ Ս. Հ. Մուրադյանը և ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ակադեմիայի քրեական իրավունքի և քրեաբանության ամբիոնի պետ, ոստիկանության փոխգնդապետ, իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ Ս.Ս. Մարկոսյանը: Բանախոսները ներկայացրին նշված չափանիշների և վերջիններիս չափորոշիչների էությունը, հիմքերը և բովանդակությունը:

Ներկայացման ավարտին բանախոսներին հղած բոլոր հարցերին տրվեցին սպառնիչ պատասխաններ:

ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՍԵՐՆԴԱՓՈԽՈՒԹՅԱՆ ԼԱՎԱԳՈՒՅՆ ԱՎԱՆԴՈՒՅԹՆԵՐՈՎ

Հաղթանակի, խաղաղության ու Հանրապետության տոներին նվիրված միջոցառումների շրջանակներում 2019 թվականի մայիսի 3-ին հանդիպում կազմակերպվեց ՀՀ ոստիկանության կրթահամալիրի սովորողների և ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վետերանների խորհրդի նախագահ, ոստիկանության պաշտոնաթող գնդապետ Ռեդան Օհանյանի, վետերանների խորհրդի անդամ, ոստիկանության պաշտոնաթող փոխգնդապետ Ռաֆայել Մեսրոպյանի հետ: Կրթահամալիրի սովորողները մեծ ոգևորությամբ դիմավորեցին հյուրերին, որոնք պատմեցին իրենց անցած ուղու, ծառայության ընթացքում պատահած առանձնահատուկ դեպքերն ու իրադարձությունները, իսկ Ռ. Մեսրոպյանն էլ ներկայացրեց իր բանաստեղծությունների ժողովածուն:

Հանդիպման ավարտին սովորողները խոստովանեցին, որ նմանատիպ հանդի-



պումները ոգեշնչում են էլ ավելի մեծ պատասխանատվությամբ և նվիրումով ծառայել հայրենիքին:



2 Շրջեց ու հանկարծ կանգ առավ իմ նառի մոտ (նառի վրա էինք քնում): Հարցրեց՝ ո՞վ է այստեղ պառկում, պատասխանեցի՝ ես: «Սա իմ տեղն է եղել»- հուզված ասաց մարշալը,- դու էլ մեծ մարդ կդառնաս...»:

Ձորացրվելուց հետո ընդունվում է միլիցիայի հրամկազմի դպրոց: Ավարտելուց հետո երեք տարի քննիչ է աշխատում Կամոյի շրջանի ներքին գործերի բաժնում: Հետագայում մինչև թոշակի անցնելը, ծառայում է միայն քրեական հետախուզությունում՝ Սևանի ու Հրազդանի միլիցիայի բաժնիներում որպես օպերիվագոր, ավագ օպերիվագոր, Ծաղկածորի միլիցիայի բաժանմունքի պետ:

«Քրեական հետախուզությունն ուժեղ մարդու տեղ է: Պատահել է՝ օրերով դրսում ենք մնացել՝ սոված, անքուն: Հանցագործի հետևից սարուձոր ենք անցել, բայց չենք տրտնջացել»- ասում է պատերազմի ու միլիցիայի վետերանն ու հավելում,- միլիցիայի աշխատանքը պետք է սիրես. ով չսիրեց,

դժգոհեց, ուրեմն միլիցիայում գործ չունի, նմանները համակարգում չպետք է լինեն»:

Միլիցիայի պաշտոնաթող փոխգնդապետ Յուլակ Հակոբյանը ժամանակին հանցավորության դեմ պայքարի առաջամարտիկ է եղել, նրա մասնակցությամբ բազմաթիվ հանցագործություններ են բացահայտվել, հանցագործներ վնասագերծվել...

«Թալանել էին Սևան քաղաքի հանրախանութը,- պատմում է Յուլակ Հակոբյանը,- Ես այդ գիշեր հերթապահում էի: Ձանգող քաղաքացին ասաց, որ գողերը հետները տարան նաև պահակին: Ամբիջապես մեկնեցինք դեպքի վայր: Ամբողջ հանրախանութը թալանել էին, միայն գնապիտակներն էին մնացել: Ականատես քաղաքացին, որ դիմացի չենքի բնակիչ էր, ասաց, որ գողերի մեքենան հեռացել է Գավառի ուղղությամբ:

Շարժվեցինք դեպի Գավառ: Մինչ այդ մոտակա աղբարկղի միջից հայտնաբերեցինք խեղդանախ արված պահակի դիակը:

Զիասած Գավառ՝ դաշտում տեսանք բաց դռներով բեռնատարը. դատարկ էր, մեջն էլ մարդ չկար, բայց արյան հետքեր կային խցիկում: Ենթադրելով, որ հանցագործներից մեկը վնասվածք էր ստացել, գնացինք Գավառի հիվանդանոց: Հերթապահ բուժքույրն ասաց, որ մեկ-երկու ժամ առաջ մի երիտասարդի ձեռք է վիրակապել: Թեև երիտասարդն անունը չէր հայտնել, բայց բուժքույրը ճանաչել էր նրան: Նա մեզ հայտնեց, թե (ըստ իրեն) որ գյուղից կարող էր լինել այդ երիտասարդը: Գիշերով հասանք այդ գյուղ: Տունը տակնուվրա արինք ու գտանք. օրորոցի մեջ էր թաքնվել: Կտրականապես հերքեց հանրախանութի գողության մասնակցելը: Ասաց՝ իբր ձեռքը վնասել է նախորդ օրը երևանում: Բեռնատար էր փախցրել, բայց ճանապարհին հարվածել էր տրամվային: Փախցրած բեռնատարով ու վնասված ձեռքով հասել էր Գավառ, հետո մեքենան թողել էր դաշտում ու վերադարձել տուն: Նրան տարանք բաժին: Պարզվեց՝ բեռ-

նատարն իրոք փնտրում էր Լենինյան շրջանի միլիցիան:

Օրեր անց բացահայտեցինք: Բեռնատարը փախցրել էին Սևանի հանրախանութից գողացած ապրանքը տեղափոխելու համար: Հետքերը վերացնելու նպատակով սպանել էին նաև պահակին: Հինգ հոգով էին եղել, հինգ-գին էլ բռնեցինք»:

«Մարդ պետք է հոգով ուժեղ լինի, դժվարություններից չվախենա, չտրտնեցա, երբեք չկորցնի լավատեսությունը»,- ասում է Յուլակ Հակոբյանը: Ինքն այդպես ապրել է, մյուսներին էլ պահանջում է այդպես ապրել, որ դժվարություններն ու փորձությունները հաղթահարվեն: Պարտվել չի սիրում՝ թեկուզ շախմատ կամ մարդի խաղախա: «Ես պատերազմ տեսած ու հաղթած մարդ եմ: Երբեք չեմ ցամաքում, որ իմ տեսածը կրկնվի: Պատերազմն ահավոր բան է»,- ասում է ու հայացքով գնում հեռո՞ւ-հեռուներ...

Հասանիկ Պողոսյան

ԿՐԹԱՅԱՍԱԼԻՈՒՄ ԷՒՆ ԶԱՅՐԱԿԱՆՔ ԶԱՄԱՅՆՔԻ ԶԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԸ



2019 թվականի մայիսի 2-ին ՀՀ ոստիկանության կրթահամալիրում էին Գեղարքունիքի մարզի Հայրավանք համայնքի հիմնական դպրոցի աշակերտները: Ճանաչողական այցի ընթացքում դպրոցականները եղան կրթահամալիրի ակումբում, պատմության բանգարանում, ժամանակակից բոլոր մարզա-

սարքերով հագեցած ֆիզպատրաստականության դահլիճում, կրթահամալիրի հրաձգարանում, մատուռում, ծանոթացան կրթահամալիրի առօրյային:

Աշակերտները գեղեցիկ տպավորություններով ու կրկին այցելելու ցանկությամբ հրաժեշտ տվեցին կրթահամալիրին:

ԶԱՅՐԵՐ ԵՎ ՈՐԴԻՆԵՐ

Իմ պապը դարսեցի Արմենակն է, որ մեծ պատիվ ու հարգանք ուներ, որ մարդու մեջ մարդկայինը գնահատելու, նրան մեծարելու շնորհքով էր օժտված, հացի վերջին պատառը կիսել գիտեր, ուրիշի ցավերը՝ դարձնում: Մեծ եղեռնից մազապուրծ եղած՝ եկել ու հաստատվել էր Անիի շրջանի Գուսանագյուղում: Կորստի վիշտը մեծ էր, ու անցյալը՝ անդառնալի, սակայն անկոտրում էր եղեռն վերապրածի կամքը:

Արմենակ պապիս կյանքը վերափնաստավորվեց, երբ նրա նորաստեղծ օջախում 1924թ. ծնվեց հայրս՝ Արտյուշա Ալեքսանյանը: Նորածին որդու ճիշդ նոր հույսեր ու նպատակներ արթնացրին Արմենակի հոգում: «Կմեծանա, ձեռք կմեկնի, հող կմշակի...»,- մտածում էր Արմենակը: Սակայն ի՞նչ իմանար հայրը, որ որդու համար Բարձրյալն ուրիշ ճակատագիր էր նախատեսել:

Մեծացավ Արտյուշան, հասակ առավ, դարձավ գեղեցիկ ու խելացի պատանի, բայց գյուղի միջ-նակարգ դպրոցը հազիվ ավարտած՝ պայթեց Մեծ Հայրենականը: Ձիվկորագրվեց և գնաց, գնաց պաշտպանելու հող հայրենին, մասնակցեց Լե-նինգրադի հերոսական պաշտպանական մարտե-րին, ապա Ուկրաինայում մարտնչեց բենդերովա-կանների դեմ: Երկու անգամ վիրավորվեց, ապա-քինվելուց հետո նորից մեկնեց ճակատ: Պատե-րազմի ավարտից հետո տուն եկավ հայրենիքի նվիրյալ զինվորը՝ կուրծքը զարդարած շքանշան-ներով ու մեդալներով:

Արժանապատիվ հայորդին աշխատանքային մկրտությունն ստացավ ՆԳՆ հրշեջ ծառայությու-նում: Ծառայությանը զուգահեռ՝ ուսումը շարու-նակեց Խարկովի հրշեջ տեխնիկական ուսումնա-րանում, այնուհետև՝ Լենինգրադի, ապա նաև՝ Մոսկվայի հրշեջ բարձրագույն ինժեներատեխնի-կական դպրոցներում:

Ալեքսանյանը ծառայության ընթացքում զբա-ղեցրել է մի շարք կարևոր պաշտոններ՝ ՆԳՆ Երևան քաղաքի Շահումյանի շրջանի հրշեջ ծա-ռայության մասի պետ, ՆԳՆ հրշեջ պահպանու-թյան վարչության ագիտացիայի և պրոպագան-դայի բաժնի պետ, ՆԳՆ Երևան քաղաքի վարչու-թյան միլիցիայի Լենինյանի բաժնում դիվիզիոնի պետ: Ոստիկանության սպան իսկական ազնվայր էր՝ օժտված պարտքի և պատասխանատվության բարձր զգացումով, հայրենասիրությամբ, ազնվու-թյամբ ու անաչառությամբ:

1976թ. Արտյուշա Ալեքսանյանը կրթին շողա-ցող բազմաթիվ մեդալներով անցել է վաստակած կենսաթոշակի, իսկ 1987թ. կնքել է մահկանացուն՝ զավակների թողնելով իր հայրական պատվիրա-նը՝ ապրել էր կար ու արժանապատիվ, արարել էր հայրենիքի շահերից ելնելով:

Ես հորս իսկական զավակն եմ, նրա իսկական հետնորդը, քանի որ նրա գաղափարակիցն եմ և երջանիկ եմ, որ հասցրել եմ ընկերություն անել նրա հետ, տղամարդուն վայել իսկական ընկերու-թյուն:

Հետաքրքիր է, որ ընտրածս մասնագիտությու-նը պիտի իմն այլ ուղով տաներ, սակայն ճակա-տագրի բերումով ես էլ հայտնվեցի միլիցիայի շարքերում. ՆԳՆ ոստիկանության գործերի վարչ-ությունում որպես ԱՀՏԱ բաժնի պետի տեղակալ, ապա՝ որպես ԱՀՏԱ բաժնի պետ, 2005-2006թթ. ՀՀ ոստիկանության ուսումնական կենտրոնում դա-սախոս, հետո՝ ընդհանուր պատրաստականու-թյան կրթաճյուղի պետ: 2011թվականից ծառայում եմ ՀՀ ոստիկանության կրթահամալիրում՝ ուսում-նական կենտրոնում, որպես կրթաճյուղի պետ:

Մի հետադարձ հայացք եմ գցում իմ անցած ու-ղուն և հպարտություն եմ ապրում, երբ զգում եմ, որ երբեք չեմ շեղվել հորս պատվիրաններից և ձգ-տել եմ ընտանեկան ավանդույթի էստաֆետը հանձնել իմ միակ որդուն՝ Արտաշես Ալեքսանյա-նին, և դա իմն հաջողվել է:

Որդիս՝ կուտսեր Ալեքսանյանը, ծնվել է 1985թ.: Դպրոցն ավարտելով՝ անմիջապես, առանց երկմտելու ընդունվել է ՀՀ ոստիկանության ակա-դեմիա: 2008թ. հաջողությամբ ավարտել է ակա-դեմիան և որտեղ էլ հայտնվել, ինչ պաշտոն էլ ստանձնել է երիտասարդ սպան, երբեք չի տա-տանվել, չի երկնչել ու անտրտուն, ոստիկանին վայել զսպվածությամբ շարունակել է ծառայել: Այժմ ոստիկանության մայր Արտաշես Ալեքսան-յանն իր կենսագրությունն է կերտում ՀՀ ոստիկա-նության Կոտայքի մարզային վարչության Նաիրի-ի բաժնի անչափահասների գործերով և ընտանի-քում բռնության կանխարգելման բաժանմուն-քում որպես պետ:

Որդիս սիրում է սպորտը և աշխատանքից հե-տո պարտադիր մարզվում է, իսկ տքնաջան աշ-խատանքը, ինչ խոսք, տալիս է բաղձալի պտուղ-ներ: Պատասխական չէ, որ Արտաշեսը ՀՀ ոստիկա-նության սամբո-ըմբշամարտի առաջնությունների բազմակի մրցանակակիր է և եռակի չեմպիոն:

Հիրավի, այսօր ես երջանիկ եմ, երջանիկ եմ դարսեցի պապիս շափողների համար ու հատկա-պես երջանիկ եմ, որ Ալեքսանյանների ընտանի-քում ևս երկու հետնորդ եմ մեծանում՝ թոռներս, և այստեղ Ալեքսանյանի դինաստիայի պատմությու-նը չի ավարտվում, հետևաբար, Ձեր թույլտվու-թյամբ, վերջակետ չեմ դնում, այլ բազմակետ...

Արմենակ Ալեքսանյան
ուսումնական կենտրոնի ընդհանուր
պատրաստականության կրթաճյուղի պետ,
ոստիկանության փոխգնդապետ

ՈՒՍԵՐԻՆ՝ ՎԱՏՂԵՐ, ԶՈԳՈՒՄ ԱՐԵՎՆԵՐ

1981թվականին՝ մահից մեկ տարի առաջ, Ալեքսեյ Հեքիմյանն իրականացրեց իր վաղեմի երազանքը և այցելեց՝ հոր հայ-րենիքը՝ Լեռնային Ղարաբաղ: Ստեղծա-գործական ուղևորությունը ոգեշնչեց նրան, և լույս աշխարհ եկավ երգերի մի նոր շարք, որոնցից առաջինը՝ «Ղարաբաղցին», ավե-լի ուշ պիտի դառնար Ղարաբաղյան շարժ-ման օրհներգերից մեկը:

Ալեքսեյ Հեքիմյանը ծնվել է Բաքու քա-ղաքում 1927թ. մայիսի 10-ին: Երեք տարե-կան էր, երբ հայրը թողեց ընտանիքը: Նրանք տեղափոխվեցին Երևան, որտեղ էլ դրվեց Ալեքսեյ Հեքիմյանի երաժշտության հիմքը, սակայն Հեքիմյանը չավարտեց երաժշտական դպրոցը և չունեցավ երաժշտական պատշաճ կրթություն: Խորհրդային բանակում ծառայելուց հետո Հեքիմյանը տեղափոխվեց Մոսկվա և ավագ ընկերների խորհրդով ընդունվեց Վաղմիր քաղաքի միլիցիայի միջնակարգ դպրոցը, ապա նաև՝ Մոսկվայի միլիցիայի բարձրագույն դպրոցը: Խելացի և բանի-մաց միլիցիոները նշանակվեց Մոսկվայի մարզի քրեական հետախուզության պետ: Սկզբունքային, կարգապահ և պահանջկոտ սպան աչքի ընկավ աշխատանքի մեջ և շատ արագ հասավ գեներալի աստիճանի:

Ալեքսեյ Հեքիմյանի մայրական կողմը Լեռնականից էր, իսկ հայրը ծնվել էր Շուշում: Նա իր դարաբաղյան արմատնե-րի վրա ուշադրություն չէր դարձնում: Սա-կայն ճակատագրի բերումով աստիճանա-բար վերադարձավ իր արմատներին: Առիթմ Աշուտ Գրաշին էր, որը ծագումով Ղարաբա-ղի Թալավարի գյուղից էր: Նրա հետ Հե-քիմյանը ծանոթացավ 1971թ. և Գրաշու բա-նաստեղծությունների հիման վրա ստեղծեց երգերի մի մեծ շարք: Այսպես՝ մեծ բարեկա-մությունից էլ ծնվեց մեծ սեր Ղարաբաղի՝ իր պատմական հայրենիքի հանդեպ:

Դեպի Ղարաբաղ կատարած ուխտագ-նացության ժամանակ չկար Գրաշին. նա իր մահկանացուն կնքել էր դեռևս 1973 թվա-կանին, սակայն բանաստեղծի հանդեպ տածած խոր հարգանքը նրան տարավ նաև Թալավար, և տեղի հասարակությու-նը մեծ խանդավառությամբ դիմավորեց տարանդավոր հայորդուն: Հիշում եմ՝ (ես այդ օրերին հանգստանում էի իմ հայրենի գյուղում) հանդիպման ժամանակ երիտա-սարդներից մեկը հարցրեց, թե Հեքիմյան

իրեն առավել շատ որտեղացի է համարում՝ շուշեցի թե Լեռնականցի: Մատերոն քթի տակ ժպտաց և իրեն հատուկ հանդարտու-թյամբ ասաց.

- Վերջերս այդ հարցն ինձ ուղղեցին նաև Լեռնականում, որտեղ ես հանդիպել էի երիտասարդության հետ: Մինչ մտածում էի, թե ինչ պատասխան տամ, նույն երիտա-սարդը շարունակեց. «Այ, Ձեր գեներալու-թյունը, չեմ վիճի, Ղարաբաղից է գալիս, բայց եթե Ձեր մայրիկը Լեռնականցի չլի-ներ, Ձեր մուգիկեն չէ՞ր հնչի»:

Չբաղեցնելով բավականին լուրջ պաշ-տոններ և լինելով խիստ զբաղված՝ Հեքիմ-յանի ընկերներն անգամ չէին կասկածում, որ նա երեկոները երաժշտություն է գրում, այն էլ ինչպիսի՝ երաժշտություն: Եվ այդ-պես՝ պատասխանատու աշխատանքին զուգահեռ, ստեղծեց մոտ 300 երգ, որոնց կեսից ավելին հիթային են, և կատարել ու այսօր էլ կատարում են այնպիսի մեծու-թյուններ, ինչպիսիք են Իոսիֆ Կոբզոնը, Վախթանգ Կիկաբիձեն, Նանի Բրեզվաձեն, Ռուբեն Մաթևոսյանը և ուրիշներ:

Նա շատ վաղ հրաժեշտ տվեց կյանքին. 55-ը դեռ չբոլորած՝ սիրտը դավաճանեց, սա-կայն իր կարճ կյանքով հասցրեց ապրել եր-կու ճակատագիր՝ գեներալի և երգահանի:

Տարիներ են հոսել, փոխվել են ժամա-նակները, սակայն մեծանուն հայորդու հիշատակը միշտ վառ է մնում հայ ժողովր-դի հիշողության մեջ: Դրա ապացույցը մա-յիսի 7-ին Ալեքսեյ Հեքիմյանի ծննդյան օր-վա կապակցությամբ Կրթահամալիրում կազմակերպված տոնական միջոցառումն էր, որին մասնակցեցին նաև Երևանի Ալ. Հե-քիմյանի անվան երաժշտական դպրոցի սաները: Այդ օրը կրթահամալիրը ողողված էր հեքիմյանական նուրբ և հոգեպարար երաժշտությամբ: Միջոցառման ավարտին հյուրերը և Կրթահամալիրի ծառայողները ծաղիկներ խոնարհեցին Հեքիմյանի կի-սանդղու առջև և լուսանկարվեցին:

Թե՛ Հայաստանի Հանրապետությունում և թե՛ Ռուսաստանի Դաշնությունում Ալեք-սեյ Հեքիմյանը վառ օրինակ է բոլոր նրանց համար, ովքեր ընտրել են և հետապնդում կրթությունը և արվեստը:

Ռ. Մուսայելյան
լեզուների ամբիոնի դոցենտ,
ոստիկանության գնդապետ

ՄՏԵՂԾԱԳՈՐԾՈՒՄ ԵՆ ՄԵՐՈՆԸ

ՀԱՆՈՒՆ ՀԱՎԱՍԻ

Քանի անգամ է երկինքը փլվել
Եվ ավերակվել աչքերիս լացում,
Քանի անգամ է բախտը ինձ տվել
Ու տարել կրկին իբրև հատուցում:

Քանի անգամ է կսկիծը այրել,
Բայց մոխիրներից ես վեր եմ հառել,
Քանի անգամ է արևս մարել,
Սակայն աստղերից նոր հուր եմ վառել:

Քանի անգամ եմ եղել հուսախաբ,
Փորձել եմ առանց թևերի թռչել,
Գարնանն եմ տեսել ես տերևաթափ,
Փորձել եմ կյանքի արմատից կառչել:

Քանի անգամ եմ...
Քանի անգամ եմ...

Բայց անգամ ճահճում ամենավատի
Չի պատել դեմքս վիհատ քրտինքը,
Եվ համուռ վաղվա օրվա հավատի՝
Ես նորոգում եմ փլված երկինքը...

Ռուսլան Մարանդյան
իրավագիտության ֆակուլտետի պետ,
ի.գ.թ., ոստիկանության փոխգնդապետ

ՀՀ ոստիկանության
կրթահամալիրը
հայտարարում է
բակալավորի կրթական
ծրագրով առկա
վճարովի ուսուցման՝
2019/2020 ուստարվա
ընդունելություն

Շրջանավարտներին
շնորհվում է
իրավագիտության
բակալավորի աստիճան
և տրվում է պետական
նմուշի դիպլոմ:
Ուսման տևողությունը
4 տարի է:

Ընդունելության
կարգին ու
պայմաններին կարող
եք ծանոթանալ
ոստիկանության
www.police.am
կամ կրթահամալիրի
www.edupolice.am
կայքերում: